ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

10 մայիս 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/04
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Նարեկ Ալիխանյանը, Վարդան Ավագյանը, Արտակ Բոջիկյանը, Արմինե Հովհաննիսյանը, Արմենուհի Մաիլյանը, Արա Մարտիրոսյանը, Սուրեն Մելիքյանը, Շուշանիկ Սահակյանը, Հասմիկ Վարդանյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Ալեքսանդր Հարությունյան, Մխիթար Հովհաննիսյան, Հովհաննես Նաղդալյան, Գեվորգ Ամիրխանյան, Գագիկ Շահնազարյան, Գարունիկ Վարդանյան, Վարդան Գրիգորյան, Լիպարիտ Սանթրոսյան, Լիլիթ Պողոսյան

<u>Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Սարգսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը</u>

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Գույքի օտարման մասին:
Զեկ.Դավիթ Սարգսյան
2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 59/1 հասցեի 784.0քմ, Կամոյի փողոց թիվ 59/2 հասցեի 207.0քմ և Կամոյի փողոց թիվ 59/3 հասցեի 18.1քմ հողամասերն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին :
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 183 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 19.3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
6. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 199 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 1-ին փողոց թիվ 61/1 հասցեի 255.4քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
8. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 1944.9քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի պայմանները և տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
9. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու թույլտվության մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 70/15 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 19.7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1791.1քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը և գյուղատնտեսական նշանակության հողերից 12927.3քմ մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 2/7 հասցեի 124.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:

Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 72/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 34. 8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
14. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
15. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 12/3 հասցեի շինությունը, պարիսպը և վերջիններիս զբաղեցրած 115. 0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
16. Դիլիջան համայնքի բնակիչ Գնել Քեռյանի կողմից նվիրաբերած LADA NIVA LEGEND մակնիշի ավտոմեքենան որպես նվեր ընդունելու և Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
17. Եգիպտացորենի վաճառքի համար նախատեսված տնակները որպես նվեր ընդունելու և Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
18. Դիլիջան համայնքի 2022-2026 թթ. աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլանը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
19. Դիլիջան համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 693-Ա/

Լսեցին
ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոցի թիվ 65 շենքի թիվ 19, երեք սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալ Ալվարդ Հրաչիկի Գևորգյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Օ րջոնիկիձեի փողոցի թիվ 65 շենքի թիվ 19, երեք սենյականոց՝ 73,97 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Ալվարդ Հրաչիկի Գևորգյանի ընտանիքին ուղղակի վաճառքի միջոցով, 110955 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 694-Ա/

Լսեցին
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵԻ ԱՂԱՍԻ ԽԱՆՋՅԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑԻ ՇԵՆՔԸ <<ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՆՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՆՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը՝ Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի 2800.0 քմ հողամասում գտնվող, հանրապետական նշանակության հուշարձան հանդիսացող 966.83 քմ ընդհանուր մակերեսով Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը ՝ շինության ավարտվածության աստիճանը 50-80%, (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 15022024-11-0072) հիմնանորոգման և որպես թանգարան վերակառուցելու նպատակով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ իրենց տրամադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 688-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը՝ Դիլիջան քաղաքի, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի 2800.0 քմ հողամասում գտնվող, հանրապետական նշանակության հուշարձան հանդիսացող 966.83 քմ ընդհանուր մակերեսով Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը՝ շինության ավարտվածության աստիճանը 50-80%, (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 15022024-11-0072) հիմնանորոգման և որպես թանգարան վերակառուցելու նպատակով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՆՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 695-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59/1 ՀԱՍՑԵԻ 784.0ՔՄ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59/2 ՀԱՍՑԵԻ 207.0ՔՄ ԵՎ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ

ԹԻՎ 59/3 ՀԱՍՑԵԻ 18.1ՔՄ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Սվետլանա Արամի Խառատյանը, Հարություն Հովհաննեսի Սաղրյանը և Անդրանիկ Հովհաննեսի Սաղրյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 59 հասցեի, իրենց սեփականության իրավունքով պատկանող 1200.0քմ հողամասին կից գտնվող Կամոյի փողոցի թիվ 59/1 հասցեի 784. 0քմ մակերեսով, Կամոյի փողոցի թիվ 59/2 հասցեի 207. 0քմ մակերեսով և Կամոյի փողոցի թիվ 59/3 հասցեի 18. 1քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 784.0քմ, 207.0քմ և 18.1քմ մակերեսներով հողամասերը չեն համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամասեր, չեն գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում են Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 59/1 հասցեի 784. 0քմ մակերեսով, Կամոյի փողոցի թիվ 59/2 հասցեի 207. 0քմ մակերեսով և Կամոյի փողոցի թիվ 59/3 հասցեի 18. 1քմ մակերեսով մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 5358092 /հինգ միլիոն երեք հարյուր հիսունութ հազար իննսուներկու/ դրամ, 1414701 /մեկ միլիոն չորս հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր մեկ/ դրամ և 123701 /հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր մեկ/ դրամ արժեքներով օտարել քաղաքացիներ Սվետլանա Արամի Խառատյանին, Հարություն Հովհաննեսի Սաղրյանին և Անդրանիկ Հովհաննեսի Սաղրյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 59/1 հասցեի 784. 0քմ մակերեսով, Կամոյի փողոցի թիվ 59/2 հասցեի 207. 0քմ մակերեսով և Կամոյի փողոցի թիվ 59/3 հասցեի 18. 1քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 5358092 /հինգ միլիոն երեք հարյուր հիսունութ հազար իննսուներկու/ դրամ, 1414701 /մեկ միլիոն չորս հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր մեկ/ դրամ և 123701 /հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր մեկ/ դրամ արժեքներով քաղաքացիներ Սվետլանա Արամի Խառատյանին, Հարություն Հովհաննեսի Սաղրյանին և Անդրանիկ Հովհաննեսի Սաղրյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 696-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1–ին հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 697-Ն/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 183 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 19. 3ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մարտի 18-ի թիվ 372-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 183 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սասուն Գերասիմի Ալավերդյանի կողմից ինքնակամ կառուցված 19. 3քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 25042024-11-0002/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սասուն Ալավերդյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 183 հասցեի ավտոտնակը՝ 19. 3քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 19. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 44699 դրամ և 131902 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 19. 3քմ հողամասը քաղ. Սասուն Գերասիմի Ալավերդյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 183 հասցեի ավտոտնակը՝ 19.3քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 19.3քմ հողամասը, համապատասխանաբար, 44699 դրամ և 131902 դրամ արժեքներով քաղ. Սասուն Գերասիմի Ալավերդյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 698-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 199 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20.7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մարտի 18-ի թիվ 373-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 199 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Նվարդ Սաշիկի Մելյանի կողմից ինքնակամ կառուցված 33.27քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 17042024-11-0109/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Նվարդ Մելյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 199 հասցեի ավտոտնակը՝ 33.27քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը, համապատասխանաբար, 77054 դրամ և 141471 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը քաղ. Նվարդ Սաշիկի Մելյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 199 հասցեի ավտոտնակը՝ 33.27քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը, համապատասխանաբար, 77054 դրամ և 141471 դրամ արժեքներով քաղ. Նվարդ Սաշիկի Մելյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 699-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 61/1 ՀԱՍՑԵԻ 255.4ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արարատ Անդրանիկի Աղաջանյանը՝ Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 1-ին փողոց թիվ 61 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 700.0քմ հողամասին կից գտնվող /1-ին փողոց թիվ 61/1 հասցեի/ 255.4քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 255.4քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասնչորսերորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 1-ին փողոց թիվ 61/1 հասցեի 255.4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 311844 /երեք հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Արարատ Անդրանիկի Աղաջանյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 1-ին փողոց թիվ 61/1 հասցեի 255.4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 311844 /երեք հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ արժեքով քաղաքացի Արարատ Անդրանիկի Աղաջանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 700-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 1944.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1944.9քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1944.9քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 701-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Դիլիջան համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Դիլիջան համայնքին հատկացվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները ուղղորդել հետևյալ տնտեսական զարգացման ծրագրերին՝

1) «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Խ.Վաթինյանի անվան փողոցի 35 հասցեից մինչև 83 հասցեն, Ուսանողական փողոցի 1 հասցեից մինչև 77 հասցեն, Աբովյան

փողոցի 1 հասցեից մինչև 17/1 հասցեն և Շամախյան-Թումանյան-Այգեստան փողոցների ասֆալտապատում և մայթերի հիմնանորոգում»,

2) «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լողավազանի կառուցում»,

3) «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 6 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում» (փողոցներ՝ Բարեկամության 3, Գետափնյա 68,70, Մոլդովական 10,12, Կալինինի 87),

4) «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների սպասարկման համար մարդատար վերելակների փոխարինում նորով» (փողոցներ՝ Գետափնյա 2,4,6,8,10,12, Կալինինի 241,243, Մոլդովական 1, Շամախյան 1Ա,1Բ,2Ա,2Բ,3Ա,3Բ),

5) «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում օղակաձև այգու հիմնանորոգում և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում»,

6) «Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում»,

7) «Դիլիջան համայնքի Թեղուտ, Հաղարծին, Գոշ,Աղավնավանք և Հովք բնակավայրերի ներգյուղական ճանապարհների տուֆապատման աշխատանքներ» (Թեղուտ՝ 3-րդ, 7-րդ, 11-րդ և 13-րդ փողոցներ, Հաղարծին՝ 2-րդ, 5-րդ, 8-րդ 10-րդ 11-րդ և 13-րդ փողոցներ, Գոշ՝ Մ.Գոշի փողոցի 2-րդ նրբ., 3-րդ նրբ., 8-րդ նրբ. և 13-րդ նրբ., Աղավնավանք՝ 3-րդ փողոց, Հովք՝ 1-ին փողոց),

8) «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և Գոշ բնակավայրում հենապատերի հիմնանորոգում և կառուցում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 702-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 70/15 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՁԲԱՂԵՑՐԱԾ 19. 7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. ապրիլի 03-ի թիվ 436-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 70/15 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Արտակ Ալբերտի Բոջիկյանի կողմից ինքնակամ կառուցված 19. 7քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 15042024-11-0063/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արտակ Բոջիկյանին՝ Դիլիջան

համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 70/15 հասցեի ավտոտնակը՝ 19.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 19.7քմ հողամասը, համապատասխանաբար, 53683 դրամ և 207122 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 19.7քմ հողամասը քաղ. Արտակ Ալբերտի Բոջիկյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 70/15 հասցեի ավտոտնակը՝ 19.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 19.7քմ հողամասը, համապատասխանաբար, 53683 դրամ և 207122 դրամ արժեքներով քաղ. Արտակ Ալբերտի Բոջիկյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 703-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 1791.1ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 8 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 12927.3ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1791.1քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը և գյուղատնտեսական նշանակության հողերից 12927.3քմ մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1791.1քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը և գյուղատնտեսական նշանակության հողերից 12927.3քմ մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 704-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 2/7 ՀԱՍՑԵԻ 124.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Հեղնար Հովելի Ալիխանյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 2/2 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 1120.0 քմ հողամասին կից գտնվող /Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 2/7 հասցեի/ 124.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 124.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 2/7 հասցեի 124.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 847453 /ութ հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղ. Հեղնար Հովելի Ալիխանյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 2/7 հասցեի 124.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 847453 /ութ հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ արժեքով քաղ. Հեղնար Հովելի Ալիխանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 705-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 72/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՁԲԱՂԵՑՐԱԾ 34. 8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. ապրիլի 05-ի թիվ 441-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 72/10 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սիլվա Ղուկասի Զանդյանի կողմից ինքնակամ կառուցված 51. 83քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 18042024-11-0080/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սիլվա Զանդյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 72/10 հասցեի ավտոտնակը՝ 51. 83քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 34. 8քմ հողամասը, համապատասխանաբար, 120039 դրամ և 237834 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 34. 8քմ հողամասը քաղ. Սիլվա Ղուկասի Զանդյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 72/10 հասցեի ավտոտնակը՝ 51. 83քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 34. 8քմ հողամասը, համապատասխանաբար, 120039 դրամ և 237834 դրամ արժեքներով քաղ. Սիլվա Ղուկասի Զանդյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 706-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0110-0102 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 337.4քմ հողամասը, 11-003-0110-0120 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 242.0քմ հողամասը, 11-003-0238-0034 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 22.8քմ հողամասը, 11-003-0250-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 22.2341քմ հողամասը, 11-003-0053-0579 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 1068.4քմ հողամասը, 11-003-0238-0058 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 231.7քմ հողամասը, 11-003-0102-0009 և 11-003-0102-0075 կադաստրային

ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 602.0քմ հողամասը, 11-003-0276-0031, 11-003-0276-0032, 11-003-0276-0033 և 11-003-0276-0038 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 696.9քմ հողամասը, կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0110-0102 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 337.4քմ հողամասը, 11-003-0110-0120 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 242.0քմ հողամասը, 11-003-0238-0034 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 22.8քմ հողամասը, 11-003-0250-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 22.2341քմ հողամասը, 11-003-0053-0579 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 1068.4քմ հողամասը, 11-003-0238-0058 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 231.7քմ հողամասը, 11-003-0102-0009 և 11-003-0102-0075 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 602.0քմ հողամասը, 11-003-0276-0031, 11-003-0276-0032, 11-003-0276-0033 և 11-003-0276-0038 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 696.9քմ հողամասը, որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 707-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/3 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 115. 0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. նոյեմբերի 01-ի թիվ 542-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 12/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Անահիտ Ծերունի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված 14. 3քմ արտաքին մակերեսով շինության և 2. 1137քմ արտաքին մակերեսով պարսպի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 06032024-11-0051/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Անահիտ Դավթյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 12/3 հասցեի շինությունը՝ 14. 3քմ արտաքին մակերեսով, պարիսպը 2. 1137քմ արտաքին մակերեսով և վերջինիս

զբաղեցրած 115. 0քմ հողամասը, համապատասխանաբար, 298070 դրամ, 44058 դրամ և 785945 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված շինությունը, պարիսպը և վերջինիս զբաղեցրած 115. 0քմ հողամասը քաղ. Անահիտ Ծերունի Դավթյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 12/3 հասցեի շինությունը 14. 3քմ արտաքին մակերեսով, պարիսպը 2. 1137քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 115. 0քմ հողամասը, համապատասխանաբար, 298070 դրամ, 44058 դրամ և 785945 դրամ արժեքներով քաղ. Անահիտ Ծերունի Դավթյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 708-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՆԵԼ ՔԵՌՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ LADA NIVA LEGEND ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի բնակիչ Գնել Քեռյանի (հասցեն՝ ՀՀ, ք. Դիլիջան, Գետափնյա փողոց 86, բն. 12, անձնագիր՝ AV0363352) և Դիլիջանի համայնքապետարանի միջև 02.05.2024թ. կնքված թիվ 01-020524 նվիրաբերության պայմանագրի քաղ. Գնել Քեռյանը Դիլիջանի համայնքապետարանին է նվիրել LADA NIVA LEGEND 21214-BOA-52 մակնիշի (շարժիչ՝ 21214 1326786, VIN XTA21140R2519078) մարդատար ավտոմեքենան՝ 4 280 000 /չորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով, սեփականության իրավունքով: Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել նշված մարդատար ավտոմեքենան ընդունել որպես նվեր և ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 42–րդ կետով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն LADA NIVA LEGEND 21214-BOA-52 մակնիշի (շարժիչ՝ 21214 1326786, VIN XTA21140R2519078) մարդատար ավտոմեքենան՝ Դիլիջանի համայնքապետարանին նվիրելու առաջարկությանը:

2. Սահմանված կարգով LADA NIVA LEGEND 21214-BOA-52 մակնիշի (շարժիչ՝ 21214 1326786, VIN XTA21140R2519078) մարդատար ավտոմեքենան՝ 4 280 000 /չորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում:

3. Համայնքի ղեկավարին՝ սահմանված ժամկետներում թվով 1 հատ LADA NIVA LEGEND 21214-BOA-52 մակնիշի ծառայողական ավտոմեքենան ներկայացնել ՀՀ ՃՈ ՀՔԲ հաշվառման համար:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 709-Ա/

Լսեցին
ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՆԱԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Երևան քաղաքի բնակիչ Լևոն Մանուչարյանի (հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորքի 9-րդ զ/ծ 1 շենք, բն. 50, ՆՔ՝ 014327779) և Դիլիջանի համայնքապետարանի միջև 02.05.2024թ. կնքված թիվ 01-020524 նվիրաբերության պայմանագրի համաձայն քաղ. Լևոն Մանուչարյանը Դիլիջանի համայնքապետարանին է նվիրել եգիպտացորենի վաճառքի համար նախատեսված կահավորված ու տեխնիկապես զինված տնակներ (25 հատ): Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել նշված գույքը ընդունել որպես նվեր և ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 42–րդ կետով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն եգիպտացորենի վաճառքի համար նախատեսված կահավորված ու տեխնիկապես զինված տնակները (25 հատ)՝ Դիլիջանի համայնքապետարանին նվիրելու առաջարկությանը:

2. Սահմանված կարգով եգիպտացորենի վաճառքի համար նախատեսված ու տեխնիկապես զինված տնակները (25 հատ) ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում:

3. Մինչև ս/թ. դեկտեմբերի 31-ը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել վաճառք իրականացնող քաղաքացիներին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹԹ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4.4 հոդվածի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹԹ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ»-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 711-Լ/

Լսեցին

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հունիսի 10-ին, ժամը 17-ին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 712-Ա/

Ավագանու անդամներ

ՌՈԲԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԶԱՐԻՆԵ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը

_____